ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ՝ ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի՝ ՀՆ-2381, ՀՆ-2382, ՀՆ-2383, ՀՆ-2384 ԵՎ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-ի ՀՆ-151 ԴԻՄՈՒՄՆԵՐԸ ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԿՈՂՄԻՑ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ**.

1. Ուժը կորցրած ճանաչել «2001 թվականի հունիսի 11-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև թմրանյութերի վերահսկման և իրավապաշտպանության բնագավառում նամակ-համաձայնագրում», «2005 թվականի հուլիսի 13-ին Երևանում ստորագրված՝ «2001 թվականի հունիսի 11-ին կնքված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև թմրադեղերի հսկողության և իրավունքի պաշտպանության նամակ-համաձայնագրում փոփոխություն կատարելու մասին» արձանագրության մեջ», «2004 թվականի մայիսի 19-ին Երևանում ստորագրված՝ «2001 թվականի հունիսի 11-ի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև թմրամիջոցների հսկողության և իրավապահ ոլորտում համագործակցության մասին» նամակ- համաձայնագրի լրացման մեջ», «2003 թվականի ապրիլի 14-ին Երևանում ստորագրված՝ «2001 թվականի հունիսի 11-ին կնքված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև թմրադեղերի հսկողության և իրավապահ ոլորտում համագործակցության մասին» նամակ-համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրության մեջ» ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործերով ընդունված՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2009 թվականի հունվարի 15-ի ՍԴԱՈ-3, ՍԴԱՈ-4, ՍԴԱՈ-5, ՍԴԱՈ-6 աշխատակարգային որոշումները։

2. ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմին՝ սահմանված կարգով վերադարձնել ՀՀ Նախագահի՝ 2008 թվականի դեկտեմբերի 29-ի ՀՆ-2381, ՀՆ-2382, ՀՆ-2383, ՀՆ-2384 և 2009 թվականի փետրվարի 3-ի ՀՆ-151 դիմումները։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

13 փետրվարի 2009 թվականի
ՍԴԱՈ-10